

ՔՐԴԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական Հայաստանի քրդերն ունեն կոլտուրական հարուստ ժառանգություն՝ իրենց դարավոր ժողովրդական բանահյուսությունը, որի ուշագրավ նմուշներից են «Դըմ-ըըմը», «Սիաբանդ և Խաջեն», «Մամե և Զինեն» և այլն։ Դրանց մեջ երգվում է աշխատանքը, աշխատավոր մարդը, ժողովուրդների եղբայրությունն ու համերաշխությունը, աշխատավոր մարդու ամենաբարձր հատկանիշները՝ ազնվությունը, իդեալական սերը, ընկերասիրությունը, բաջությունը, խարազանվում են հայրենիքի դավաճանները, աշխատավորներին շահագործողները, թուլամորթները։

Ունենալով կոլտուրական այսպիսի ժառանգություն, հասկանալի է, որ քրդական նորաստեղծ գրականությունը լայնորեն պիտի օգտվեր դրանից։

Քուրդ հեղինակները այդ հարուստ ժառանգությունից վերցված նյութերը (առածներ, երգեր, հեքիաթներ, վիպերգներ և այլն) օգտագործել են իրենց կազմած մայրենի լեզվի դասագրքերի համար։ Դրանով իսկ միաժամանակ սկիզբ գնելով քրդական հարուստ բանահյուսության գրառման և հրատարակման գործին։ Ինչպես քրդական ինքնուրույն գրականության ստեղծումը, այնպես էլ քրդական բանահյուսության գրառման, հրատարակման գործը, սերտորեն կապվում է քրդական այբուբենի ստեղծման հետ, որը հնարավոր եղավ միայն սովետական կարգերում։¹

Համամիութենական գրողների առաջին համագումարում, որը տեղի ունեցավ 1934 թվականին, Մ. Գորկին սրեց ժողովրդական բանահյուսության գրի առման և հրատարակման հարցը և ասաց. «Հավաքեցեք ձեր ֆոլկլորը, սովորեցեք նրանից, մշակեցեք այն։ Ֆոլկլորը շափազանց շատ նյութ կտա թե՛ ձեզ, թե՛ մեզ, Միության բանաստեղծներին և արձակագիրներին»։²

Մ. Գորկու այս ցուցումը ուղեցույց հանդիսացավ քրդագիտությամբ ղեկավորողների համար։ Գիտական բազմաթիվ արշավախմբեր մեկնեցին Հայաստանի քրդաբնակ շրջանները, որոնք գրի առան ֆոլկլորային հարուստ նյութ։

1936 թվին լույս տեսավ կոմպոզիտոր Կարո Զաքարյանի և մեր «Քրդական ժողովրդական երգեր» ժողովածուն։ Այդ առաջին ժողովածուն, որը 137 երգից է բաղկացած, բոլորովին նոր ներդրում է քրդական ֆոլկլորի, ինչպես նաև քրդական երաժշտության պատմության մեջ։ Առաջին անգամն էր, որ այդքան մեծ քանակությամբ երգեր էին ձայնագրվում և տպագրության հանձնվում։

Նույն 1936 թվին լույս տեսավ «Քրդական ֆոլկլոր» ստվարածավալ (663

¹ Քուրդ ժողովրդի ականավոր գավակ բանաստեղծ Ֆեդյա Գուլաթեկովը (Ֆերիկ) ուսներեն լեզվով դրել է մի շարք բանաստեղծություններ, որոնք նվիրված են հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ուղուցիային. տես՝ Рядиков «Центросибирь», Новосибирск, 1949 г. стр. 228—229.

² Մ. Գորկի, Գրական հրապարակախոսական հոդվածներ, Իրևան, 1949 թ., էջ 333։

էջ) ժողովածուն, որի մեջ տեղավորված են՝ «Կառու Քուլուկ»-ի հերոսական սիրային վիպերգի 30 պատումները, աշխատանքային, սիրային, մանկական երգեր, ինչպես նաև բազմաթիվ պարերգեր, պոեմներ, հեքիաթներ, նշանավոր կույր գուսան Ավդալե Ջալենի մի շարք ստեղծագործությունները և այլն:

«Քրդական ֆուկլոր» ժողովածուում զետեղված ստեղծագործությունների մեջ գովերգվում է աշխատանքը («Բերիվանե», «Գառները բեր», «Այ հովիվ», «Մի հոտ ոչխար», «Ալկե Շամո», «Գութան» և այլն), ցայտուն կերպով դրսևորված է ժողովուրդների համերաշխությունը («Կառու Քուլուկ»), գովերգվում են աշխատավոր ժողովրդի ներկայացուցիչները («Խաջե և Սիաբանդ», «Հասո Ռարանո» և այլն), պայքարն օտարերկրյա բռնապետության (թյուրքերի, իրանցիների) և ներքին տիրող դասակարգերի դեմ («Դըմ-դըմ», «Դավրեշե Ավդի»), գովերգվում է ազատ սերը («Էմմե», «Դարդո») և այլն: Մի խոսքով այս գիրքը քուրդ ժողովրդի նախասովետական շրջանի կյանքի ու պայքարի պատմությունն է՝ գեղարվեստական, վիպական-բանաստեղծական խոսքի միջոցով արտահայտված:

«Քրդական ֆուկլոր» ժողովածուի հրատարակումով քուրդ սովետական գրականությունը մեծապես հարստացավ: «Քրդական ֆուկլորի» որոշ՝ ավելի աչքի ըսկնող նյութեր ենթարկվեցին գրական մշակման՝ «Հայլի ու Մաշլում», «Մուսո», «Ջամբիլ-Ֆրոշ», «Ջըբրի և Բնաֆշ» և այլն: «Կառու Քուլուկ», «Ալանավերակ», «Քյոռոզլի» և ուրիշներ զետեղվեցին քրդական դասագրքերի մեջ: Դրանցից կատարվել են հայերեն թարգմանություններ, որոնք լույս են տեսել:

Բացի այդ գրի են առնվել նաև մի շարք այլ նյութեր, որոնք ներկայումս գտնվում են Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության սեկտորում:¹

Քրդական սովետական ֆուկլորն իր արտահայտչական միջոցներով առնչվելով նախասովետական շրջանի ստեղծագործությունների հետ, բովանդակությամբ ու թեմատիկայով կազմում է բոլորովին նոր որակ, նրա մեջ չկան և չէին կարող լինել հին ֆուկլորի համար բնորոշ՝ ցեղապեաներին, ցեղամիջյան երկարատև կռիվներին վերաբերող ստեղծագործություններ, դիցաբանական և կախարդական բնույթի հեքիաթներ, առասպելներ: Սոցիալիստական ռեալիզմը դարձել է քրդական նոր ֆուկլորի ուղեցույցը: Ստեղծվեցին ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական բազմաթիվ ստեղծագործություններ: Նոր բովանդակության հետ առաջացավ նաև նոր ձև, դրանցից են այն քառատող ստեղծագործությունները, որոնք բացի երաժշտության վերածվելուց, հարմար են նաև արտասանության համար: Այդպիսի երգերից են այն ժողովրդական ստեղծագործությունները, որոնք զետեղվել են Մ. Գորկու խմբագրությամբ «Պրավդայի» հրատարակությամբ լույս տեսած «Творчество народов СССР» (1937) թ. ինչպես նաև «Творчество народов СССР о Сталине и Красной Армии» (1936 թ.) ժողովածուների մեջ:

Քրդական սովետական ֆուկլորը թեմատիկայի տեսակետից բազմազան է. դրա մեջ գովերգվում են Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան,

¹ Հայկական ՍՍՏ Գիտությունների ակադեմիայի Պատմական թանգարանի ազգագրական բաժինը մեծ աշխատանք է կատարել քրդական ազգագրության և ֆուկլորի գրի առման գործում: Խոշոր աշխատանք է կատարել նաև Արվեստի ռեկտորը, որը քրդական ժողովրդական ավելի քան 200 երգեր է գրի առել:

Ժողովուրդների հանճարեղ առաջնորդներ լենինն ու Ստալինը, նրանց զինակիցները, բոլշևիկների փառապանծ պարտիան, լենինյան կոմերիտմիությունը, Սովետական անպարտելի Բանակն ու նրա մարշալները, սովետական ազատ հայրենիքը, ժողովուրդների համերաշխությունը, ստախանովյան աշխատանքը, սոցիալիստական շինարարությունը, կոլխոզային կյանքը և այլն, նկարագրվում է Հայրենական պատերազմը, գովերգվում է մեր հաղթանակը։ Քրդական սովետական բանահյուսության ուշագրավ նմուշներից է «Լենին Ուլյանով»-ը, որն ունի խրոխտ ու մարտական եղանակ։

Չեմ մոռանա, չեմ մոռանա,
լենինի գործը չեմ մոռանա,
Թշնամիներից չեմ վախենա,
լենինի ուղուց չեմ հեռանա։

Մենք աշխատում էինք, հարուստներն ուտում,
Մենք վառվում էինք ցավից, տանջանքից,
Մեր սովետներին շնորհակալություն,
Որ մեզ ազատեց նրանց ձեռքերից։

Քուրդ բանասացները, երգիչներն ու գուսանները մեծ առաջնորդներ լենինի և Ստալինի անվան հետ են կապում սովետական կյանքի բոլոր երեւոյթները, բոլոր նվաճումները։ Քրդական սովետական բանահյուսության մեջ նրանք շարունակ հանդես են գալիս միասնաբար և ազատագրում են ճնշված ժողովուրդներին, կազմակերպում են «բոլշևիկյան խմբեր» և պայքարի են դուրս գալիս աշխատավորության թշնամիների դեմ. ձրիակերներին, աղաներին, բեգերին և նրանց կողմնակիցներին «թախտից գցում»։ Ամեն տեղ որպես «սոցալ» արևներ լուսավորում են հետամնաց, խավարում խարխափող ժողովուրդներին։ Ժողովուրդը լսում, հետևում է նրանց, պայքարի է դուրս գալիս հին աշխարհի դեմ։

Դե, լո, լո, լո, լո, լո, լո,
Կտրիճ խմբերը բոլշևիկյան,
Քուրդները դրին ու վեր կացան,
Քչեցին անգութ ցարի վրա,
Որ նրա տունն անեն վերան,
Թնդաց, դղրդաց աշխարհը բոլոր,
Դե, լո, լո, լո, լո, մերխասու։

Դե, լո, լո, լո, լո, լո, լո,
Նրանց առաջից գնում էր լենին,
Նրանց առաջից գնում էր Ստալին
Կարմիր դրոշակը բռնած ձեռքերին,
Առաջ էին տանում կարմիր զորքին,
Կովի էր գնում աշխարհը բոլոր,

Դե, լո, լո, լո, լո, լո, լո, մերխասու¹

Լենինը և Ստալինը առաջնորդելով «բոլշևիկյան կտրիճ խմբերին», ազատագրելով աշխատավորներին, տվին գյուղացուն՝ հող, բանվորին՝ գործարան։

¹ Հ. Ջ. և Կ. Ի. Լենինն ու Ստալինը քրդական ֆուկլորում, տես՝ ՍՍՄՄ ԳԱ Հայկական ֆիլիալի «Տեղեկագիր» № 4—5, Երևան, 1941 թ., էջ 108։

Նրանք ստեղծեցին սովետական իշխանություն, բանվորները և գյուղացիները երկրի տերերը դարձան: Քուրդ աշխատավորները ևս իրավահավասար դարձան. «Ժողովուրդների եղբայրության մեջ» իրենց լիովին ազատ զգացին, իրենց սրտի մոտ զգացին լենինի և Ստալինի հիմնադրած փրկարար սովետական իշխանությունը:

Նիկոլի գործը, ախ, շատ զուլում էր,
Գիշեր ու ցերեկ ծեծ ու տանջանք էր,
Նա ուներ անթիվ ուժեղ բանտեր,
Բանտերի առաջ՝ շատ ժանդարմաներ:

Աշխատավորի տունը գոմ էր,
Նրանց կերածը գարե չոր հաց,
Նրանց շապիկը մեշկից կարած
Գիշեր ու ցերեկ բրտինքից թաց:

Լենինը չընդունեց այս վատ բանը,
Ստալինը չընդունեց այս վատ բանը,
Հաց, հող, եզն ու կովը տվին ռանչպարին,
Բոլոր գործարանները տվին բանվորին:

Նախկին Ալագյազի շրջանի Քրդի Փամբ գյուղի բնակիչ, սրնգահար Քամ-լի ասած այս երգը, որ նա սովորել է նույն շրջանի Ջարջարիս գյուղի կոլխոզ-նիկ, երգիչ, բանասաց Ջալիլ Ռաշոյանից, տարածված և սիրված ստեղծագործություններից մեկն է:

Քրդական նոր ֆուկլորի մեջ Լենինի մահվան մասին չկան լալկան երգեր: Լենինը կենդանի է, կա նրա անմահ գործը, գործում է նրա հավատարիմ գի-նակից, մեծ և իմաստուն աշակերտը՝ ընկեր Ստալինը: «Ստալինը այսօրվա Լենինն է, Լենինը մեղ հետ է,— այսպես է ասում քուրդ նշանավոր գուսան Ահմե Չոլուն:

«Ստալինը՝ Լենինի հարազատ եղբայրը» — ինչպես ասված է մի երգում, քուրդ աշխատավորներին քոչվորությունից ազատեց, նստակյաց դարձրեց, ունեւոր և կուլտուրական կյանքի տեր դարձրեց: Քրդական նախկին կիսաքոչ-վորական և քոչվորական հետամնաց գյուղերում կալմակերպվեցին կոլեկտիվ տնտեսություններ: Կոլխոզային գյուղում մուտք գործեցին տրակտորներ, կոմ-բայններ, ավտոմոբիլներ, նախկին գյուղը հիմնովին փոխվեց, թե՛ սրտաքնա-պես և թե՛ ներքնապես:

Հարուստ է կոլխոզն այնքան,
Արտերը ոսկի ծփում,
Կոլխոզը մեր տունն է դարձել,
Եվ նա մոր պես մեզ սնում:

Այսպիսի երգ է հորինել Ալագյազ գյուղի կոլխոզնիկ գուսան Ահմե Չո-լուն, որը քուրդ ժողովրդի մեջ, իբրև ստեղծագործող նույն տեղն ունի, ինչ որ Ջամբուլը Ղազախական և Ս. Ստալինի Դաղստանի ժողովուրդների մեջ:

Լենինի մեծ աշակերտ Ստալինի անվան հետ է կապվում ՍՍՄԿ Կոնսուլ-տույիայի, նոր գործարանների, քաղաքների, սովխոզների ստեղծումը: Այդ մասին են երգում Ապարանի շրջանի Ջարջարիս գյուղի բնակիչ Ջալիլ Ռաշո-յանը, գուսաններ Նազուկն ու Ահմե Չոլուն:

Քրդական ստեղծագործություններում լենինի հավատարիմ զինակից Ստալինի անունը անխզելիորեն կապված է մեր բոլոր հաղթանակների հետ:

Մեր Հայրենիքը նոր ու լուսավառ,
Մայրաքաղաքը՝ կարմիր Մոսկվան,
Ստալինը մեր արևը պայծառ,
Արևն ունի լույս ցերեկը միայն,
Բայց Ստալինը, հարազատ ու մեծ՝
Մեզ լույս է տալիս գիշեր թե ցերեկ:

Այսպիսի երգ է հորինել մեր հիշատակած Ահմե Չոլուն: «Ստալինը, — ասվում է «Ստալինավա» («Ստալինակերտ») երգում, լինում է կոլխոզական գյուղերում, շեն ու բերքառատ է դարձնում, նրա նկարները ծանոթ ու հարազատ են ոչ միայն զառամյալ ծերերին, երիտասարդներին, այլև այն երեխային, որ նոր միայն ճանաչում է իր շրջապատը, իսկ երբ սկսում է առաջին բառերը թոթովել, ապա դրանց մեջ է Ստալին հարազատ անունը: Այդ ոգով է հորինված Թուրքմենական ՍՍՌ Աշխաբադի շրջանի, Յամբաշ աուլի քուրդ բնակիչներ Ռամազան Միամիշ-օղլիի և Սեդար Քերիմ-օղլիի «Լենինի մեծ աշակերտը» քրդերեն երգը, որը թարգմանվել է ռուսերենի և զետեղված է «Творчество народов СССР о Сталине и Красной Армии»: ժողովածուի մեջ» (Մոսկվա, 1939 թ., էջ 99):

Քուրդ ժողովուրդը ամեն անգամ բերկրանքով է լսում առաջնորդի ձայնը և լցվում խորը հավատով, շտեմնված խանդավառությամբ: Դրան է նվիրված Ա. Միրազու «Ծա տեսնում եմ Ստալինին» երգը, որը նույնպես թարգմանված է ռուսերենի և զետեղված է վերոհիշյալ ժողովածուի մեջ (էջ 257):

Մարքսի, Էնգելսի և Լենինի մեծ աշակերտ անմար,
Ողջ ժողովուրդը ողջունում է բեզ խնդությամբ իր վառ,
Քո հստակ խոսքը հասկանալի է մեր սրտի համար,
Դու խոր ես, հզոր, մենք բեզ սիրում ենք, առաջնորդ պայծառ:

Սովետական քրդական երգիչները մի շարք ստեղծագործություններ են նվիրել Ստալինի զինակիցներ Մուրտուլին, Վորոշիլովին, Միկոյանին, Բերիային:

Կիրովի չարանենգ սպանության լուրը երկրով մեկ տարածվեց: Քուրդ ժողովրդի երգիչները հորինեցին նրա մասին նոր երգեր: Դրանց մեջ դրվատվում է Լենինի-Ստալինի պարտիային նվիրված հերոս բուլշևիկի գործունեությունը, նրա նվիրվածությունը հայրենիքին, Լենինի և Ստալինի մեծ գործին:

Ահմե Չոլույի ստեղծագործած «Սովետական Բանակ» երգը, ուր դրսևորված է ժողովրդի սերն իր քանակի նկատմամբ, տարածված երգերից մեկն է: Տարածված երգերից է Սովետական Միության մարշալ Բուդյոննուն նվիրված երգը: Ըստ այդ երգի Բուդյոննին եկել է Հայաստան և օգնել է հայ և քուրդ աշխատավորներին՝ երկրից վռնդելու դաշնակներին, անգլիացիներին, աղաներին, եկել է, որպեսզի Լենինի ղեկավարությամբ ազատագրի կովկասյան բոլոր ազատատենչ ժողովուրդներին:²

¹ О. Вильчевский. Курдские песни о Сталине и Кирове, տե՛ս «Советский фольклор», № 4—5 М—Л., 1936, стр. 86—88.

² О. Вильчевский, Октябрь в курдском фольклоре, տե՛ս «Советский фольклор», № 2—3 М—Л., 1936, стр. 89—92.

Քրդական սովետական ֆուկլորում զգալի տեղ են բռնում գերմանական ֆաշիզմի դեմ Սովետական Միության ժողովուրդների մղած Հայրենական մեծ պատերազմին, այդ պատերազմում սովետական ժողովուրդների ձեռք բերած պատմական հաղթանակներին նվիրված երգերը։ Քուրդ ժողովրդի երգիչը մեր երկրի համար ամենադժվարին օրերին դիմում է Սովետական հզոր Բանակին, ժողովրդին, բանվորին ու գյուղացուն, պարտիզանին, տղամարդկանց ու կանանց, որ մի մարդու նման հավաքվեն ընկեր Ստալինի շուրջը՝ պաշտպանեն սովետական սրբազան հայրենիքի ամեն մի գյուղն ու քաղաքը, բարձր պահեն ժողովուրդների պատիվը, ձեռք բերած ազատությունը, կուլտուրան։ Մի երգում մայրը դիմելով բանակ զնացող որդուն, ասում է.

Գնա լաո, գնա քաջ կովիւր,
Մեր պատվի համար, մեր ընտանիքի.
Օձ ֆաշիստներին ջարդիր ու փշրիր,
Եվ թեզ հերոսի անուն վաստակիր։

Հայր Ստալինն է թեզ կովի տանում
Դուն էլ զինվոր ես մեծ Ստալինի,
Թող վաստակի մարդը քաջի անուն,
Թեկուզ աշխարհում նա մի օր ապրի։

«Մեր մեծ հայրենիքը շատ քաղցր է», — ասում է երգիչ Ջազոն իր «Վաթան» (հայրենիք) երգում։ Մեր քաղցր հայրենիքը պետք է պաշտպանել։ Նրա պաշտպանության համար պետք է համախմբվել պարտիայի շուրջը, բարձր պահել լենինի և Ստալինի դրոշը և այդ դրոշով ֆաշիստներին հաղթել» — այդպես է երգում քուրդ կուլխոզնիկ Թողուն։

Քուրդ սովետական երգիչը, ծաղրելով «Մարդակեր Հիտլերի կայծակնային պատերազմը», ցույց է տալիս, «մեր թրերի ուժն ու թափը», որի հարվածների տակ հիտլերյան բանակներն օրը օրի վրա ցրիվ են գալիս։ Նա երգում է — «Մեր քաջարի մարշալների» մասին, որոնք «Առաջնորդի կոչով գրոհում են հրեշ Հիտլերի վրա»։

Ուր ես փախչելու դու դազան Հիտլեր,
Տես բանակների օր օրի վրա —
Մեր թրերի հարվածից ցրիվ են գալիս,
Էսօր նրանց վերջն է, վաղը թոնը կլինի¹։

Սովետական ժողովուրդը, այդ թվում նաև սովետական քուրդ փոքրամասնությունը, անսահման հավատով էին լցված դեպի Սովետական պանծալի Բանակը, նրանք վստահ էին, որ անպայման հաղթանակելու է նա, քանի որ նրա ղեկավարն է մեծ զորավար ընկեր Ստալինը։

Մայրիկ, Ստալինդրադն ինչ շեն քաղաք էր,
Ֆաշիստ, քո տունը դառնա բրիչակ,
Նայիր մեր շորս կողմը, ավար է, ավեր,
Աշխարհն արյան ծով — լայն ու անհատակ։

¹ Հ. Ջ. Ս. ի. Հերոսական և հայրենասիրական մոտիֆները քրդական ֆուկլորում, տես ՍՍՌՄ ԴԱ Հայկ. ֆիլիալի «Տեղեկագիր» № 9—10, Երևան, 1942 թ., էջ 46։

Մայրիկ ջան մի լա, իմ ազիզ մի լա,
 Պետք չէ ոչ արցունք, ոչ լաց, ոչ հեծեծ,
 Մեր հույսը կարմիր Մոսկվան է՝ ասի
 Էլի զորավարը— Ստալինն է մեծ:

Ժողովրդական երգիչները Ստալինի նկատմամբ իրենց սերն ու երախտիքը արտահայտելու համար դեպի Մոսկվա զնացող մարդկանց և թռչուններին են դիմում, իսկ երեխաներն անհամբեր սպասում են այն օրվան, երբ հայր Ստալինը կգա նրանց մոտ: «Հայրենիքի» քաղցր օրեր» երգում ասվում է, թե քուրդ տատիկի երջանիկ թոռները ինչպիսի անհամբերությամբ սպասում են Ստալին պապին:

Ժողովրդային երգիչները գովերգել են քուրդ նշանավոր մարտիկներին: Այդպիսի ստեղծագործություններից են Արթիկի շրջանի Թ. Գյողալգարա գյուղի երգիչ Արմենակ Հակոբյանի քրդերեն երգը՝ նվիրված Սովետական Միության Հերոս Սիաբանդով Սամանդին, ինչպես նաև Թալինի շրջանի Ղաբաթ-թափա գյուղի գուսան Նազուկի «Սամանդե Սիաբանդ» երգը, դարձյալ նվիրված նույն հերոսին:

Պատմության մեջ քուրդ երգիչն ու բանասացը երբեք այնպես չեն գնահատվել, ինչպես այդ տեսնում ենք մեր օրերում, Սովետական Հայաստանում: Հայ և Հայաստանում բնակվող այլ ժողովուրդների երգիչների հետ բեմ են դուրս գալիս նաև քուրդ երգիչները: Թալինի շրջանի Հակկո և Թրլք. Ապարանի շրջանի Ալագյազ և Սանգառ գյուղերի ինքնագործ խմբերը, որոնց գործունեությունն արդեն երկու տասնյակ տարիների պատմություն ունի, հաճախ հանդես են գալիս Նրևանում, մասնակցում են ռեսպուբլիկական օլիմպիադաներին: Քուրդ գուսանների գործերից մի քանիսը ոչ միայն լույս են տեսել քրդերեն, այլև հայերեն: Դրանցից երկուսը՝ Ահմե Չոլուն և Ջալիլե Ռաշոն (Ռաշոյան) 1938 թվին ընդունվեցին Հայկական ՍՍՌ Գրողների Միության մեջ:

Գուսան Նազուկը, որին Հայկական ՍՍՌ արվեստի վարչության կողմից իրավունք է տրվել մեր ռեսպուբլիկայի տարբեր վայրերում երաժշտական ելույթներ ունենալու, հորինել է մի շարք երգեր՝ երեք լեզվով:² Իր աչքի ընկնող աշխատանքների համար նա Հայրենական պատերազմի օրերին պարգևատրվեց «Հայրենական Մեծ Պատերազմի աշխատանքային արիության համար» 1941—1945 թ. թ.» մեդալով և Հայկական ՍՍՌ Գերագույն Սովետի Պատվոգրով:

Քուրդ երգիչներն ու բանաստեղծները մեծ ոգևորությամբ շարունակում են իրենց ստեղծագործությունների մեջ արտացոլել այն հոյակապ նվաճումները, որ Սովետական Միության ժողովուրդները ձեռք են բերում բոլշևիկների պարտիայի և մեծ առաջնորդ ընկեր Ստալինի գլխավորությամբ:

ՀԱՋԻԵ ՋՆԴԻ

¹ «Գրական թերթ», 1938 թ., 12 փետրվարի:

² Хр. Кушнарёв, Народные таланты, տես «Коммунист», 1944 г. 14 мая.